ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«08» 02 2017թ.
ԴԿ/5702/2-83

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 27.01.2017թ.՝ զինապարտների զինվորական հաշվառման և նրանց ազատ տեղաշարժի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ գրության հայտնում եմ, որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախազորակոչային տարիքի քաղաքացիների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում և կցագրման ենթակա են տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիները:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության մարմինները պարտավոր են 16 տարին լրանալու տարում զինվորական հաշվառման վերցված զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել մինչև նրանց զորակոչային տարիքը՝ 18 տարին լրանալը:

Նախազորակոչային տարիքի զինապարտները, անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին վերոնշյալ նշման առկայության դեպքում՝ մինչև իրենց 18 տարին լրանալը, կարող են ազատ տեղաշարժվել ՀՀ սահմաններից դուրս ու ներս, այդ թվում նաև երկար ժամանակով:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՔՀԾ 1-ին դասի պետական խորհրդական Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+37410) 29-44-01, Ֆաքս (+37410) 29-43-12